ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 60

«11» մայիսի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 2-ՐԴ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-119-0002-0001-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 148.58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՆՏ ԱԼԲԵՐՏԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՉՈՐՍ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 114 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հրանտ Կարապետյանի դիմումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Քեթի բնակավայրի 4-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 2-րդ բնակելի տուն հասցեում գտնվող 08-119-0002-0001-001 կադաստրային ծածկագրով 148.58 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման

վկայական N 09092020-08-0035), որպես ընդհանուր բաժնային սեփականություն նվիրել այդ բնակելի տանը 1991 թվականից փաստացի բնակվող Հրանտ Ալբերտի Կարապետյանին՝ 6/12 բաժնեմասը /անձնագիր՝ AS0669717, տրված՝ 26.06.2019 թվական, 030-ի կողմից/, Արթուր Ալբերտի Կարապետյանին՝ 2/12 բաժնեմասը /անձնագիր՝ AK0421361, տրված՝ 14.01.2010 թվական, 030-ի կողմից/, Անուշ Իշխանի Սահակյանին՝ 2/12 բաժնեմասը / անձնագիր՝ AN0284194, տրված՝ 04.12.2012 թվական, 030-ի կողմից/, Անի Արթուրի Կարապետյանին՝ 2/12 բաժնեմասը /նույնականացման քարտ՝ 004467429, տրված՝ 23.09.2014 թվական, 030-ի կողմից/:

2.Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 595-րդ և 596-րդ հոդվածների համաձայն նվիրառուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, այն ենթարկել նոտարական վավերացման և ապահովել անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող Քեթի բնակավայրի 4-րդ փողոց 3-րդ նրբանցք 2-րդ բնակելի տուն հասցեում գտնվող 08-119-0002-0001-001 կադաստրային ծածկագրով 148.58 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը քաղաքացի Հրանտ Ալբերտի Կարապետյանի երկու անձից բաղկացած ընտանիքին նվիրելու մասին>> թիվ 114 որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝ ---------- ---------- ----------

Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«11» մայիսի 2021 թվական
գյուղ Մայիսյան